ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*

Սույն խորագիրն ունեցող մեր նախորդ հրապարակման ներածական բաժնում փորձել ենք հիմնավորել մատենագիտական կարգի նյութերի երեւան բերման կարեւորությունը ձեռագրագիտության համար: Հեղաբեկումներով, վայրումներով ու հայրենազրկումներով լեցուն Հայոց նոր պատմությունը չինայեց նաեւ դարերով ստեղծված եւ վանական կենտրոններում ու լուսավոր անհատների հավաքածուներում կուտակումներ տված ձեռագրական մշակույթին: Արմաշի,[1] Անկյուրո Կարմիր վանքի[2], Կեսարիայի[3], Մշո[4], Բագավանի[5] վանքերում ու եկեղեցիներում արձանագրված հավաքածուների ցիրուցան լինելը կամ չքացումը կռահելի են դարձնում հայոց ձեռագրական կորուստների ծավալը: Իսկ միջնադարյան յուրաքանչյուր ձեռագրի կորուստ միաժամանակ մատենագրական մեկ կամ մի քանի հուշարձանի, գրչության վայրի անվան, գրչի ու պատվիրատուի, հեղինակի կորուստ է նշանակում: Ձեռագրերի ճակատագիրը գրեթե նույնական է նրանց ստեղծողների, հեղինակների ու պատվիրատուների ճակատագրերին. փորձություններն ու անդիպությունները նրանց գոյության տեսական ուղեկիցներն են եղել: Իրողությունը հավաստելու համար բերենք ձեռագրական աշխարհում այնքան հազվադեպ արձանագրված մեկ օրինակ. 1848 հունիսի 5-ի «Հայաստան» թերթի համարում տպված հաղորդման համաձայն Պոլսո հայ ձկնորսները ծովից հանել են կաշեկազմ մագաղաթյա Ավետարան, քայքայված, գրված Հայոց 649 թվականին (1200 թ.): Երկար ժամանակ այն գտնվելիս է եղել Գում-Գաբու թաղի՝ 1855 թ. Հարություն Պեզճյանի կտակով կառուցված Սուրբ Հարություն գեղեցկաշեն եկեղեցում, ուր մինչ այդ եղել է Բաբազլար մերքեզի կոչվող մատուռ[6]:

Մատենագիտական ցանկերի, ձեռագրական հիշատակարանների հրապարակման ու ուսումնասիրության կարեւորությունը հիմնավորելու համար մեր հոդվածներից մեկում վկա-

---

* Նախորդ հրապարակումը տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 2009, 1-12, էջ 227-240:

1 **Յ. Թօփճեան,** Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962: Ընդգրկում է 223 միավոր:

2 **Բարգէն ալթոռակից Կալթողիկոս,** Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957: 323 միավոր:

3 «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ շրջակայս նոցին», նկարագրեց **Տրդատ եպիս. Պալեան,** կազմեց՝ **Գէորգ Տէր-Վարդանեան,** Երեւան, 2002: Ընդգրկում է 114 միավոր:

4 «Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից», կազմեցին՝ **Սահակ Ա. Մուրատեան, Նազարեթ Մարտիրոսեան,** Երուսաղէմ, 1967, Ը+232 էջ: Նկարագրված է վանքի 126 եւ Մուշի ու շրջակայից 159 միավոր: Մաս է կազմել «Նշխարք Տարօնոյ» գործին: Տե՛ս «Սիոն», 1967, էջ 524, նաեւ՝ «Սիոն» 1968, էջ 173-175: Նազարեթ Մարտիրոսյանի «Նշխարք Տարօնոյից» քաղելով «Սիոնը» տպագրել է Մուշի եւ շրջակայքի 131 արձանագրություն - հիշատակարան: Տե՛ս «Սիոն», 1967, էջ 525-533, 1968, էջ 46-57, 239-243:

5 **Պարույր Մուրադեան,** Դրվագներ Բագավանի ձեռագրական հավաքածոյի պատմությունից, ՊԲՀ, 1999, թ. 1, էջ 195-203:

6 Տես **Տոքր. Վ. Թորգոմեան,** Երեմիա Քէօմիւրճեան, Վիեննա, 1913, էջ 271-272:

յակոչել էինք ակադ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի ստորեւ հրապարակվող Arm. 288 անհեղինակ ցանկի 2-րդ համարի տակ ներկայացվող «*Ծիսարան*» բոլորգիր ձեռագրի հիշատակարանը՝ սրբագրելիք ու լրացնելիք տեղիներով[7]: Դարգվում է, որ նրանում առկա է վկայություն Տայքի Խախու գավառի ***Շիկբակը*** բերդի Ս. Աստվածածին եւ Ս. Սարգիս Ջորավար եկեղեցիներում 1211 թ. հայ հոգեւորականների ներկայության մասին, ընդ որում՝ արքեպիսկոպոս Հովհաննեսի գլխավորությամբ, որի ձեռքով եւ գրվել է հիշատակարանը[8]: Սա խոսուն եւ հազվագյուտ տեղեկություն է քաղկեդոնականությանը հարած եւ դավանաբանորեն վրացականացող միջավայրում հայկական գրչության օջախի պահպանության մասին: Պիտի ենթադրել, թե ցանկ կազմողը ծանոթ է եղել Տայք-Կղարջքի էթնիկական ու դավանական պատմությանը եւ հիշատակարանի տեղեկության եզակիությունը ճանաչելու թելադրանքով է ողջ ցանկում այդ միակ հիշատակարանն ընդօրինակել:

Եթե երբեւէ ավարտին հասնի հայոց ձեռագրական հավաքածուների եւ անհատ մարդկանց մոտ գտնվող գրչագիր մատյանների գիտական նկարագրությունը եւ սկիզբ դրվի ձեռագրերի թեմատիկ ու ժամանակագրական ներկայացմանը, այս մատենագիտությունները խոսուն վկայություններ կդառնան թվարկվող հուշարձանների գոյության կամ կորստի: Բայց մինչ այդ անհրաժեշտ է այս կարգի մատենագիտական ցանկերի պրպտում ու համատեղված հրատարակություն:

Թ-ք. Arm. 288

სომხურ ხელნაწერთა (რიცხვით 16) კოლექციის აღწერა, შედგენილი XIX ს. (?) დასაწყისში.

კოლექცია უცნობია, ისევე, როგორც შემდგენელი.

[Հայերեն ձեռագրերի (թվով՝ 16) հավաքածոյի նկարագրութիւն, կազմուած ԺԹ դարի սկզբին: Հաւաքածոն անծանօթ է, ինչպէս նաեւ կազմողը]:

Համարակալ 2 եւ կես թերթ է:

5. Ժամագիրք. փոքրադիր համառօտեալ, յորում գոն եւ Փառք տօնից, բայց բազմօք պակասաւոր է եւ նորոգեալ յայլոց: Կան ի նմա նաեւ Երգք պատարագի, Ժամամուտք եւ մեծ մասն ինչ ի Տօնացուցէն: Գրեալ [է] ի վերայ մագաղաթի, որ յիշատակարանն է այս.

---

7 **Պարույր Մուրադյան,** Նշմարներ Դավիթ Կյուրոպաղատի եւ Տայքի հայոց բարբառի մասին, «Էջմիածին», 2009, Ե, էջ 96-105: Ափսոսանքով պիտի նշենք, որ հոդվածում. Դավիթ Կյուրոպաղատին վերաբերող 999 թ հիշատակարանի թաղվածքը վկայակոչելիս հետեւելով «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր» ժողովածոյի կազմող Ա. Մաթեւոսյանին (էջ 73), գրչության վայր ենք նշել *Հաղբատ*, մինչդեռ բուն տեքստում ու նախորդ հրատարակություններում խիստ որոշակի ասված է, որ Եփրեմի մեկնությունը ընդօրինակված է **Աղբակի** (Հաղբակի) *Երանի* անունը կրող Արծրունյաց տիրույթում, իսկ Ռսկեբերանինը՝ **Կոգովիտում,** Բագրատունյաց եպիսկոպոսարանում: Հարկավ, Տայքի մերձավորությամբ գտնվող այս գրչատներում առավել ի մոտո տեղյակ կլինեին Կյուրոպաղատի հետ կապված անցուդարձերին, քան հեռավոր Հաղբատում: Շիոթի պատճառը տեղանունների արտասանական մոտիկությունն է:

8 Շիկբակը անվերապահորեն Վախուշտիի հիշատակած «Շիփաքլո»-ն է Թորթումի կիրճի մերձակայքում, Խսխուլի (Խսխուի) լեռան ստորոտին: Տե՛ս ქართლის ცხოვრება, ტ. IV: ბატონიშვილი ვახუშტი, აღწერა სამეფოსა საქართველოსა. ს. ყაუხჩიშვილი გამოცემა, თბ, 1973, էջ 686:

Փառք անեղին եւ անմարին, անբիծ անկէր իսկականին,
Երրակի փարոռոշին եւ միակի եզականին.
Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն՝ երրորդումին երեակ անձին,
Յանելն յայժմոյս եւ յապագային:

Յազգանազեան մեծ փռումարի Հայոց Մեծաց թուականի
Երեակ քառիցս հարիւրի, ինենտասանց եւ ութ թվի,
Աւարտ եղեւ այսմ փառի, որ Մանրուսմունք յորջորջի,
Ի յաշխարհս Ղրըմի, ի յեզր Պոնտոս ծովի:

Ի քաղաք հռչակելի, որ եւ Կաֆա անուն կոչի
Առ դուռս Սրբոյն Աննայի, ծնողաց Սրբոյն Աստուածածնին,
Հայրապետութեամբ տեառն Տէր Գրիգորի՝ Էջմիածնի պատրիարգին,
Եպիսկոպոսութեան Տէր Մաղաքիայի հիւսիսական կողմն աշխարհի

Տկար մատամբ գծագրեցի ես՝ անպիտան Աւետիս
Գրօնաւորս ղրըմեցի ի խնդրոյ կրօնաւորի
Տրապիզոնու Տէր Ղազարի՝ սայ ըստացող տարփմամբ սրտի,
Ի յիշատակ անջնջելի եւ ծնողաց իւր կրկնակի եւ ամենայն աշխարհի:

Որք հանդիպիք եղանակել եւ կամ գրել աւրինակել
Զգծողս եւ զստացողս յաղօթս ձեր յիշատակել եւ թողութիւն մեղաց հայցել:
Զի եւ ձեզ Տէրն ողորմեսցի, այն որ առատն է ի բարի,
Եւ ընդ (?) փառք ամենայնի՝ այժմ եւ յաւէտ եւ յապառնի:

Ծան. Գրված է մասամբ կապտավուն-դեղնավուն թղթի վրա, verso-ն ազատ է՝ քանի որ recto-յի տողերը երեւում են (ծրել է):

6. Ծիսարան. բոլորգիր ի վերայ բամբակեայ թղթոյ, որ սկսանի ի խաչօրհնելոյ եւ աւարտի ի ժամհար օրհնել:

Յիշատակարան. «Փառք ամէն . . . . . երը . . .

տրանվանի . . . քրիստ[ոնէ]ական հաւատոյ կարգաւորութեանն ձեռամբ մեղապարտ Յովհաննիսի սուրանուն արհի [եպիսկոպոսի, որ] միայն զանունս ունիմ եւ ոչ գործն, տիմար եւ անարուեստ փցուն գրիչ:

Ի թուականին Հայոց ՉԿ., տանուտէր Ջրհոսն, ի թագաւորութեան Հայոց պարոն Աշի-նի, ի հայրապետութեան Տեառն Կոստընդնայ, ի յարքեպիսկոպոսութեան Տէր Գրիգորիո-սի, ի յիշ[խ]անակալութեամբ գաւառայպետիս մերոյ պարոն Թաղա[յ]ի կատարեցաւ տառս այս ի գաւառի իւրում, որ կոչի *Խոխու* ի [բ]երդն, որում անուն է *Ծիկբակ,* ընդ հովանեաւ

Սուրբ Աստուածածնին, սրբոյն Սարգսի Զաւրավարին, ի յիշատակ . . . իմոց եւ զաւակաց իմոց:

3. *Նոր Կտակարան.* սկսեալ ի թղթոյն Պօղոսի, որոց իւրաքանչիւր առնէ նախադրութիւն յար եւ նման Աւետարանաց, հին է ըստ երեւոյթին, զի չիք յիշատակարան՝ քանզի պակաս է ի յէրր(որդ) (?) եղբարս:

4. *Ճաշոց*՝ ամբողջ. բոլորգիր, զոր հեղինակային ի յիշատակարանի կոչի *Տարեգիրք*, գրեալ ձեռամբ Ղազար գրչի Ղրիմեցոյ ի թվ. ՊԶԱ եւն:

5. *Յայսմաւուրք.* բոլորգիր միակերպ գրեալ ի Վան երկիր Վասպուրականի ձեռամբ Վարդան քահանայի ի թուականութեան ՊՂ . . . ի հայրապետութեան մեծաթոռոյն Սրսայ, որ յայսմ ամի զԼուսաւորչի աջն գողացեալ տարան, ի պարոնութեան Ջհանշային զաւրութիւն (եւն պատմէ զգործս նորայ):

6. *Սաղմոս.* խոշորագիր, գրեալ ի ՌՀԹ թուին, յորոյ առաջն եղեալ կան խրատական բանք ի վերայ սուրբ գրոց մեծին Աթանասայ:

7. *Ժամգիրք.* բոլորգիր, հանդերձ Սաղմոսիւք ինչ եւ աղօթիւք Նարեկացւոյն խառն գրեալ ի հազար հարիւր ԻԲ, ի մայրաքաղաքս Պոնտոս ընդ հովանեաւ Սուրբ Զարխափան Աստուածածնին:

8. Աւետարան. բոլորգիր, գրեալ ի թուին Հայոց ՋԼԷ ի պարոնութեամբ Աղուբէկին:

9. *Մաշտոց.* բոլորգիր, գրեալ յԵդեսիա ի ՌԺԷ թվին ձեռամբ Յովհաննէս երիցու:

10. *Ծիսարան.* բոլորգիր, գրեալ ձեռամբ Մաթոս գրչի ի թվականին ՋԺԳ:

11. *Աւետարան.* բոլորգիր, յորոյ ի վերջն եղեալ կայ Պատմութիւն շնացեալ կնոջն, գրեալ ի վերայ մագաղաթի ի թուականութեան տոմարին ՉԺԷ, ի դուռն գերահռչակ ուխտին Անդրիասանց մերձ յԱնումիկն (?) դղեակ բարձրանուն կոչեցեալ:

12. *Սաղմոս.* բոլորգիր, գրեալ ի վերայ մագաղաթի, յոր կայ եւ մասն ինչ Ժամանակագրութեան: Անյիշատակարան:

13. *Մաշտոց.* բոլորգիր ընդ գանձուց ինչ:

14. *Մաշտոց.* բոլորգիր, գրեալ ի ՌԻԸ:

15. *Տօնացոյց.* փոքրադիր, գրեալ ի ՌՂԷ:

16. *Յիշատակագիր,* յորում նշանակեալ կան անուանք նոցա, որք տուեալ են ինչ-ինչ վանուց:

Թ-բ. Arm. 289

Երկու նեղ թերթերի վրա ընդօրինակված մատենագիտական ցանկ՝ գրված XIX դարի վարժ ձեռքով: Կազմողի կամ հավաքածոյի պատկանելության մասին որեւէ տեղեկություն չկա:

1r*Աբրահամ կաթողիկոսի Կրեպացւոյ Պատմութիւն:*
Աղօթից գիրք մեծին Ներսէսի:

Աղօթից գիրք Յովհ. Ոսկեբերանի:
Աղօթք, նորագիւտ, Նարեկացւոյ կածեալ:
Աղօթից գիրք սրբոյն Եփրեմի եւ այլոց ոտանաւորք:
Աղօթից գիրք սրբոյ Յուսկան:
Աղօթից գիրք Փոկասու հայրապետի:
Այրբենի սահմանք ի Մովսէս Քերթողէ:
Անկար պատմուճանին Քրիստոսի պատմութիւն, թէ ուստի ինչ:
Ասացուածք Գրիգոր կաթողիկոսի Ի Սուրբ Երրորդութիւն:
Ասացուածք սրբոյն Բարսղի:
Արտաքնոց մեկնութիւնք ի Դաւթայ:
Բան վասն ապտիճանաց եկեղ[եցւոյ]:
Բան վասն բաժանման Վրաց ի մէջ:
Բան վասն հաւատոյ ի սրբոյ Լուսաւորչէն:
Բանք խրատականք ի սրբոց հարց:
Բանք խրատականք առ կրօնաւորս:
Բանք ի վերայ աղօթից եւ պահոց ի Խոսրովայ:
Գաւազան կաթողիկոսաց:
Գաւազանագիրք Հայոց՝ սկսեալ յԱղամայ մինչեւ ի ՌՃԿԴ թիւն:
Գիրք աղօթից ի Մարկաւագ վարդապետէ:
Գիրք քարոզի Յոհ. Երզնկայեցւոյ:
Դպրասպանագիրք Հայոց (եթէ այլ է ի Մխիթար Գօշէ):
Դաւանութիւն սրբոյն Աթանասի:
Դաւանութիւն Վանական վարդապետի:
Դաւանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ:
Դաւանութիւն Հոռմայ եկեղեցւոյ:
Դաւանութիւն Յեսայեայ վարդապետէ:
Դաւանութիւն Քաղկեդոնի ժողովոյն:
Դիոնեսիոս. առաջին թարգմանութիւն:
Դիոնեսիոս. երկրորդ թարգմանութիւն:
Դիոնեսիոս, թարգմանեալ ի Լեհացւոյն:
1vԵպիփան Կիպրացւոյ Թուղթք:
Զանազան բանք սրբոց հարանց, գրեալ ՈՒԱ:
Զանազան բանք իմաստասիրաց՝ պիտանիք ամենայն ումեք:
Զանազան վճռից Ասպուածաբանի լուծումն յԵղիայ վր. առ ()

Թուղթք Աթանասի եւ Կիւրղի հայրապետացն:
Թուղթք առ Գր[իգոր] կաթողիկոսն ի Սպեփ[անոսէ] Սիւնեցւոյ:

Թուղթ առ Գր[իգոր] կաթողիկոսն ի Պապէն, գրեալ ՉԾԴ թուին:

Թուղթ առ զանազան անձինս ի *Շնորհալոյն*, որ չէ տպեալ:

Թուղթ Դէոսկորոսի ի Հայաստան:

Թուղթ Կոստանդեայ ընդդէմ Պապին:

Թուղթ Մովս[էս] վարդապետի Երգնկացւոյ առ հատուածեալ երէցն Մատթէոս:

Թուղթ պատասխանւոյ յԱղուանից առ կաթողիկոսն եւ առ վարդապետսն մեր:

Թուղթ Փոքր պատրիարգին Յունաց առ Հայս ի ՉԻԷ թուին:

Ինն երանութիւն եւ կուսութիւն՝ Նիւսացւոյն (յառաջնոյն հատուած մի եւ եթ կայ առ մեզ):

Ի գործոցն Քաղկեդոնի, թարգմ. Գէորգ վարդապետի:

Լուծմունք սոցա (՞) եւ առաքինութեանց ի Տաթեւացւոյն:

Լուծմունք. ապտուածաբանութիւն ի վերայ Մկրտութեան ճառին ի Դաւթայ:

Լուծմունք բոլոր արտաքին գիտութեանց:

Լուծմունք զանազան խրթին բանից Ապտուածաբանին ի Դաւթէ

Լուսաւոր պատերազմ Եւագրեայ, մեկնեալ յԵզեկիէլէ:

Խրատ վասն վերջին օծման:

Խրատք ի սրբոց հարանց առ կրօնաւորս:

Խօսք Եպիփ. Կիպրացւոյ:

Կանոնական թուղթ յԵսայի վարդապետէ առ Մատ[թէոս] քահանայ:

Կանոնք եկեղեցականք:

Կրկակ երկոտասանց նահապետաց:

2r*Հարց եւ պատասխանք Շնորհալոյն:*

Ճառ՝ ընթերցեալ ի ժողովք Եփեսոսի:

Մեկնութիւն Եսայեայ՝ *յԵփրեմէ եւ յՈսկեբերանէ համառօտեալ:*

Մեկնութիւն Ժողովողի ի Նիւսացւոյ:

Մեկնութիւն Ժողովողի ի Շնորհալւոյ:

Մեկնութիւն իմաստութեան ի Շնորհալւոյ:

Մեկնութիւն ինն երանութեանց եւ Հայր մերի ի Նիւսացւոյ:

Մեկնութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ, արարեալ յումեմնէ:

Մեկնութիւն Կաթողիկէից ի զանազան վարդապետաց:

Մեկնութիւն ճառից եւ այլոց բազում բանից, գրեալ ի ՉԼԱ թուին:

Մեկնութիւն Մարկոսի ի Ճոն Բարսղէ (առ մեզ միայն Բ հատորն կայ):

Մեկնութիւն Պօղոսի թղթոցն՝ *յընտիր արանց արարեալ:*

Մեկնութիւն Սաղմոսի յԵպիփանէ:

Յոհ. Իմաստասիրի Վասն ժողովոյ բանք:

Նաւարկութիւն Գր. Ապտուածաբանի:

Ներբող Պօղոս վարդապետի առ առաքեալսն:

Ներբողեան առ Շնորհալին ի Գրիգորէ:

Ուիսպանէս եպիսկոպոսի Պատմութիւն:

Պատմութիւն եւ թուղթք կաթողիկոսաց եւ վարդապետաց մերոց առ Աղուանս եւ Վիրս:

Պատմութիւն ժողովոյն Կարնոյ:

Պատմութիւն ժողովոց եւ թեմից պատրիարգաց:

Պատմութիւն Ծիծեռնեայ սուրբ Խաչին

Պատմութիւն վարուց Սրբոյն Մեսրոպայ:

Պատմութիւն Ռուբինեանց:

Պատմութիւն նախահարց յԵպիփանու:

Պատմութիւն նոր նահատակին՝ Լոյս պարոնի:

Պատմութիւն սրբոյ Գեղարդեան եւ ձեւոյն եւ այլ իրաց, գրեալ ՈՒՄ թուին:

Պատմութիւն վասն Մաթուսաղայի Սիւնեաց եպիսկոպոսի:

Պատմութիւն քրիստոնեայ թագաւորացն Կիպրոսի եւ բարձացն Անտիոքայ:

Վարդան գիրք (եթէ իցեն առակքն նորա, զոր չունիմք):

2v *Վիպասանութիւն վասն ծագման Պահլաւունեաց եւ Մամիկ:*

Քաղուածոյ արարածոց ի Յոհ. Թուլկուրանցւոյ:

Քաղուածու Աւետարան Ղուկասու ի Մատթէոս վարդապետէ:

Քաղուածու Եսայեայ ի Տաթեւացւոյ:

Քաղուածու չորից Աւետարանաց ի նմանէ:

Քարոզք Աբրահամ եպիսկոպոսի, որ է առաջնորդ Սպաթէի վանաց:

Քարոզգիրք Տիրատուր վարդապետի:

Քարոզգիրք Յոհ. Ե[ր]զնկացւոյ:

Քննութիւն կարգաց եկեղեցւոյ:

Օրէնք եւ սովորութիւնք Երդայեցւոց: